Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 19-ի «Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության որոշ մարմինների և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկատվություն փոխանակելու մասին» N 1354-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) որոշման մեջ և հավելվածներում «Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն» բառերն իրենց համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն» բառերով՝ իրենց համապատասխան հոլովաձևերով, իսկ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն» և «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե» բառերն իրենց համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե» բառերով՝ իրենց համապատասխան հոլովաձևերով.

2) որոշման 1-ին կետի «գ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը տրամադրվող տեղեկատվության ցանկը (հարկային մարմնի մասով)՝ համաձայն N 3 հավելվածի.».

3) որոշման 1-ին կետի «դ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը տրամադրվող տեղեկատվության ցանկը (մաքսային մարմնի մասով)՝ համաձայն N 4 հավելվածի.».

4) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ը» ենթակետով.

«ը) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրվող տեղեկատվության ցանկը՝ համաձայն N 8 հավելվածի.

5) ուժը կորցրած ճանաչել որոշման N 1 հավելվածի 28-րդ կետը.

6) որոշման N 3 հավելվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ (ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՄԱՍՈՎ)».

7) որոշման N 4 հավելվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ (ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՄԱՍՈՎ)».

8) որոշման N 3 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14-րդ կետով.

«

14.	Գրանցված վարձու աշխատողների քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում, աշխատողների թվաքանակ, աշխատավարձի չափ, եկամտային հարկ, սոցիալական վճար	Յուրաքանչյուր ամիս	էլեկտրոնային	ամսվա ավարտից 30 օրվա ընթացքում

».

9) որոշման N 4 հավելվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	4.	ՀՀ արտաքին առևտրի մաքսային վիճակագրության տվյալների բազաները (ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետություն-ների , ԵԱՏՄ անդամ հանդիսացող պետու-թյունների , ֆիզիկական անձանց) ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ տասանիշ կոդերի, ըստ հետևյալ դաշտերի՝ արտահանում/ներմուծում, «ընթա-ցակարգերը», «ենթաընթացակարգերը», ծագման երկրի ծածկագիրը, առևտուր անող/նշանակման երկրի ծածկագիրը, լրա-ցուցիչ չափի միավորի ծածկագիրը, քանակը՝ արտահայտված չափման լրացուցիչ միավոր-ներով, նետտո քաշը/ հիմնական չափի միավորով (կգ), մաքսային արժեքը (ՀՀ դրամ, ԱՄՆ-ի դոլար), սահմանին տրանսպորտի տեսակի ծածկագիրը, տրանսպորտի պատկանելության երկրի ծածկագիրը, գանձումներն ըստ հարկատեսակների)	Յուրաքանչյուր ամիս կուտակային կարգով	էլեկտրոնային	ամսվա ավարտից 20 օրվա ընթացքում	».

10) ուժը կորցրած ճանաչել որոշման 1-ին կետի «է» ենթակետը և դրանով հաստատված N 7 հավելվածը.

11) որոշումը լրացնել N 8 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: